Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 14.1/[81040]-11

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 21-ԻՆ ԺԱՄԸ 15:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ «ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Ա. Աշոտյան	ՀՀ կրթության և գիտության նախարար
Վ. Գաբրիելյան	ՀՀ ֆինանսների նախարար
Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Ա. Ղազարյան	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության նախագահ
Ռ. Թոփչյան	«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի տնօրեն
Գ. Մարգարով	Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի տեղեկատվական անվտանգության և ծրագրային ապահովման ամբիոնի վարիչ
Ժ. Կարաասլանյան	«Լույս» մշակութային, գիտական, կրթական հիմնադրամի գործադիր տնօրեն
Հ. Մկրտչյան	ՀՀ վարչապետի օգնական
Ա. Միրզախանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ
Ս. Սիմոնյան	ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության գլխավոր մասնագետ
Վ. Ասլանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության առաջատար մասնագետ
Ս. Կարախանյան	«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի վարչության ղեկավար

Topchyan20.06.11[1]

1. Մասնագիտական ուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների մասին

(Ռ. Թոփչյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հավանություն տալ ՀՀ-ում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգի նախագծի լրամշակված տարբերակին.

2) հանձնարարել ՀՀ կրթության և գիտության նախարար Ա. Աշոտյանին՝ լրամշակել ՀՀ-ում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգի նախագիծը՝ նիստում հնչեցված դիտողություններին համապատասխան և այն ներկայացնել ՀՀ կառավարության քննարկմանը.

3) հանձնարարել «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի տնօրեն Ռ. Թոփչյանին՝

ա. «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի հաջորդ նիստի քննարկմանը ներկայացնել ՈԱԱԿ-ի կողմից բուհերին մատուցվող ծառայությունների գնագոյացման մեթոդական ուղեցույց,

բ. «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամներին ներկայացնել Փորձաքննության ձեռնարկը:

2. Նիդերլանդների և Ֆլանդրիայի հավատարմագրման գործակալության կողմից տեխնիկական աջակցություն «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամին

(Ռ. Թոփչյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հավանություն տալ Նիդերլանդների և Ֆլանդրիայի հավատարմագրման գործակալության կողմից «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամին նախատեսվող տեխնիկական աջակցության առաջարկին:

3. Հիմնադրամի աշխատակազմի համալրում

(Ռ. Թոփչյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հավանություն տալ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի հաստիքները ևս 8-ով ավելացնելու առաջարկությանը.

2) հանձնարարել ՀՀ կրթության և գիտության նախարար Ա. Աշոտյանին՝ ՀՀ ֆինանսների նախարար Վ. Գաբրիելյանի հետ համատեղ քննարկել 2012-2014 թվականների ՄԺԾԾ-ում «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի հաստիքների ավելացման հետ կապված ֆինանսական միջոցների նախատեսման հնարավորության հարցերը:

4. Ընթացիկ հարցեր

(Ռ. Թոփչյան, Տ. Սարգսյան)

Ընդունել ի գիտություն «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի տնօրեն Ռ. Թոփչյանի՝ տեղական փորձագետների կողմից իրականացված ինստիտուցիոնալ փորձարկումների արդյունքների մասին զեկուցումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Topchyan20.06.11[1]